

Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ

ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Կ.Ուլնեցի փողոց հ.56/14 հասցեում
նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի վերակառուցման

Պատվիրատու՝

« Լաքշրի Ապարտմենտ » ՍՊԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ տնօրեն



Միջնապայան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն.....3

1.2 Հապավումներ.....3

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը4

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը.....7

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր.....7

Էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ.....10

1.4.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը11

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....17

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ17

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ.....18

Նախատեսվող գործունեության տարածք շինհրապարակի կազմակերպման հատակագիծ ..20

1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա.....21

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում23

2.ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ.....26

2.1 ՖԻԶԻԿԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....26

2.2 ԿԼԻՄԱՆ.....27

2.3 Օդային ավազան.....31

2.4 Ջրային ռեսուրսներ.....33

2.5 Հողերի նկարագիրը.....34

2.6 Հիմնային աշխատանքներ.....34

2.7 Կենսաբազմազանություն.....35

2.8 Թափոնների կառավարում.....37

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....38

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....38

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....39

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....39

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....39

3.3.2 ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....40

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....40

3.3.4 ԿԱՆԱԶՍՊԱՏՈՒՄ.....41

3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ.....43

3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ.....45

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....46

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....47

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....50

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....47

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....48

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն
- 1.2 Ձեռնարկող՝ <<Լաքշրի Ապարտմենտ>> ՍՊԸ
- 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ Կ.Ուլնեցի փողոց հ.56/14
- 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ Կ.Ուլնեցի փողոց հ.56/14
- 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

1.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաբնակարան բնակելի շենքերի նախագիծը նախատեսվում է իրականացնել ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Կ.Ուլնեցի փողոց հ. 56/14 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաբնակարան բնակելի շենքեր:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բնակելի շենքերի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Նախնական գնահատման հայտը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Նախնական գնահատման հայտը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ

(կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեւերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

16. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

17. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

18. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

19. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Բնակելի շենքի կառուցման համար հատկացված 3,000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողատարածքը գտնվում է Կ.Ուլնեցի փողոցի 56/14 հասցեում: Հողամասի ռելիեֆն ունի 9 մետր տարբերություն՝ Ուլնեցի-Ռուբինյանց փողոցից մինչև զուգահեռ սպասարկող փողոցը: Հողատարածքին մոտեցումը և հասանելիությունը երկկողմանի է: Կառուցապատման տոկոսը 48.5 է: Էսքիզային նախագծի հիման վրա տրված Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքով (N 01/18-07/2-14283 - 154) սահմանվել է վերին փողոցային նիշից կառուցապատման բարձրությունը՝ 28մ և ստորին նախագծային 0-ական նիշից՝ 16.5մ, աստիճանավանդակների և ճակատային էլեմենտների ավելի բարձր շեշտադրումով: Մասնաշենք Ա՝-ի նախագծում ընդունված ռելիեֆի աստիճանաձև կազմակերպումը հնարավորություն է տալիս ստանալ բնական լույսով ապահովված լրացուցիչ կիսանկողային հարկ, որի քաղաք ուղղված հարավային կեսը ծառայում է որպես լիարժեք բնակելի հարկ, իսկ վերջինիս հյուսիսային կեսը, որը նույնպես ապահովված է բնական լուսավորությամբ, նախատեսված է օգտագործել որպես օֆիսային տարածքներ՝ փողոցից առանձին մուտքերով: Երկրորդ, երրորդ և չորրորդ ստորգետնյա հարկերում տեղակայված են կայանատեղերը, մուտքը միակողմանի է՝ կարգավորվող մուտքի եւ ելքի լույսերով: Շենքի տանիքը օգտագործվող է կանաչ ծածկով, նախատեսվում են բաց տեսահարթակներ, զուգարաններ և խոհանոց: Քաղաք ուղղված հարավային ճակատը լուծված է մեծ լուսամուտներով, որպեսզի ապահովի առավելագույն համայնապատկերը: Հյուսիսային ճակատում օգտագործվել է փոխակերպվող ստվերների համակարգը՝ կանխելով ենթադրվող դիմացի բնակելի շենքի բնակարանների ուղղակի դիտումը, սակայն ապահովելով բավարար լուսավորում: Կողային ճակատների լուծումները նախատեսում են ստատիկ շերտավարագույրային համակարգով, ստվերային լուծմանը հակառակ թեքությամբ, որը ամբողջապես կխոչնդոտի հարևան հողատարածքներին նայող բացվածքներից տեսանելիությունը, մինչև ժամանակ ապահովելով անհրաժեշտ ինսուլյացիա: Լուծման արդյունքը ապակե բլոկերի համեմատ տալիս է ավելի շատ լուսավորություն ապահովելով ուղիղ տեսանելիության խոչնդոտումը:

Նախատեսվող մասնաշենք Բ՝-ի լուծումը միջանցքային է, միջանցքը տեղադրված Ա՝ մասնաշենքի ուղղությամբ, ապահովելով անմիջական տեսանելիության բացառումը: Մասնաշենքի հիմնական ծավալը 4 հարկանի է, ընդհանուր օգտագործման տանիքով, իսկ եզրային մասերում՝ 5 հարկանի (դուպլեքս բնակարանների հաշվին, վերջին բնակարաններ սպասարկող միջանցքը 4-րդ հարկում):

- Նախագծում օգտագործված նյութեր՝
- տրավերտին (հղկված եւ փայլեցրած) օդափոխվող երեսապատումով, որ նվազեցնում է ջերմության կորուստը:

- Բետոնի հարդարված մակերեսներ:
- կախովի ճակատային ապակեպատում, թրծված ապակու քիվապատեր պատշգամբների եւ լոջիաների համար:
- բազալտե սալիկներ նկուղային մասերում:
- փայտ բուսակամարների և ստվերների երեսապատման մեջ:

Նախագծում ընդունված՝ ճակատների կանաչապատումը պատշգամբների տեռասների ծաղկամաններով, բացի բնակարանների միկրոֆլորայի ստեղծման հնարավորությունից, մեղմացնում է ճակատների երկրաչափական սրությունը, իսկ պատշգամբների հարկից հարկ հակառակ թեքությունները հնարավորություն են տալիս ծաղկամաններում մինչև 5 մետր ընդհանուր բարձրությամբ կարճահասակ ծառերի օգտագործում՝ միաժամանակ ճակատի մոդուլը դարձնելով մասնակիորեն երկհարկանի: Աստիճանավանդակի դռները հակահրդեհային են:

Նախկինում, N 01/18-07/1-9—5413-809 ճարտարապետա-հատակագծային առաջադրանքով կատարվել է նախագիծ, որը անցել է համալիր փորձաքննություն և ստացվել շինարարության թույլտվություն 01/18-121569-193 որի համաձայն հողամասի Ռուբինյանց-Ուլնեցի մայրուղուն հարող մասում նախատեսված էր 7 հարկ, իսկ հողամասի հարավային մասում նախատեսված է եղել 4 առանձնատուն՝ 2 լիարժեք և մեկ մասնակի հարկով: Այնուհետև, տարածքի հարավային կողմից հարող հողատարածքը ստացել է ճարտարապետա-հատակագծային առաջադրանք և շինարարության թույլտվություն՝ 5-հարկանի շենքի նախագծման համար: Տվյալ հանգամանքը N 01/18-07/1-9—5413-809 ճարտարապետա-հատակագծային առաջադրանքով նախատեսված 2+1 հարկանի մասնաշենք Բ՝-ի /բաղկացած 4 առանձնատներից/ իրականացումը դարձրել է ոչ նպատակահարմար: Քաղաքապետարանի կողմից տրամադրվել է նոր ճարտարապետա-հատակագծային առաջադրանք՝ 01/18-07/2-14283-154, որով մասնաշենք Ա՛-ն ավելացել 1-տիպային հարկով՝ առանց կոնստրուկտիվ և հատակագծային փոփոխությունների, քանի որ ի սկզբանե շենքի կոնստրուկցիաները նախատեսված էին վերգետնյա 10 հարկի համար, իսկ հողամասի հարավային մասում տեղակայված շինությունը /մասնաշենք Բ/ Ֆունկցիոնալ և կոնստրուկտիվ փոփոխությունների արդյունքում դարձավ 4 և մասնակի 5-հարկանի: Տվյալ պահին մասնաշենք Ա՛-ի շինարարական աշխատանքները կատարվել են մինչև 6րդ հարկ, իրականացվում է 7րդ հարկի շինարարությունը, ինչպես նաև իրականացվել են Բ մասնաշենքի հողային աշխատանքները:

Այդ ընթացքում նախկին Դավիթ Անհաղթի փողոց 14/12 և 14/15 հասցեները միավորվել են մեկ հասցեի տակ՝ Կ.Ուլնեցի փողոց հ 56/14:

Ստորգետնյա ավտոկայանատեղիները հարկ եղած դեպքում ծառայելու են որպես թաքստոց և վերազինվելու են համապատասխան Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական մի կոմիտեի նախագահի N128-Ն հրամանի:

Որպես շինանյութ օգտագործելով ե/բ, բուտոբետոն, գազաբետոնե բլոկ, մետաղական թեթև կոնստրուկցիաներ, մետաղապակի: Տանիքները նախատեսվում է իրականացնել հարթ, օգտագործելով երկաթբետոն, ջրամեկուսից նյութեր: Ջրահեռացումը ներքին է, կազմակերպված: Հողամասի տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նախատեսվել են թեքահարթակներ:

Ստորգետնյա ավտոկայանատեղիները համալրված են անհրաժեշտ բոլոր պայմաններով անհրաժեշտության դեպքում բնակիչների տարահանման և պատսպարման միջոցառումները կազմակերպելու համար: Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի N128-Ն հրամանի համաձայն:

Այդ ընթացքում նախկին Դավիթ Անհաղթի փողոց 14/12 և 14/15 հասցեները միավորվել են մեկ հասցեի տակ՝ Կ.Ուլնեցի փողոց հ 56/14:

Տեխնիկական ցուցանիշներ:

Հողամասի մակերես՝ 3000 քմ

Կառուցապատման մակերես – 1798 քմ;

Կանաչապատման մակերես – 1202 քմ;

Բնակարանների քանակ՝ 67

Ստորգետնյա կայանատեղիների քանակ՝ 120

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի;
- գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Ջեռուցումը և օդափոխությունը ողջ համալիրում կատարվելու է անհատական լուծմամբ օդորակիչների և էլեկտրական ջրաջեռուցիչ կաթսաների միջոցով:

ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ.-Նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ ավտոկայանատեղից:

Արտաձումը կատարվում է արտաձման համակարգերի միջոցով: Օդահեռացումը կատարվում է երկու զոնաներից՝ վերին և ներքին: Հարկավոր է նախատեսել CO գազի բաղադրությունը չափող ցուցիչ, որի ազդանշանի դեպքում կաշխատի արտաձման օդամուղը: Ներաձման համակարգերի միջոցով ապահովվում է մաքուր օդի մուտք ավտոկայանատեղերին: Բնակարանների սան.հանգույցներից և խոհանոցներից օդի արտաձումը բնական է:

Բոլոր սան. հանգույցների հորանների վրա վերևում նախատեսվում են դեֆլեկտորներ:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ

Շենքերում օգտագործված են մշակված հատակագծային լուծումներ, որոնք միտված են կրճատել ընդհանուր օգտագործման տարածքների մակերեսները, խնայելով դրանց ջեռուցման և հովածմանը ուղղված էներգիայի ծավալները: Այս վայրերում ինչպես անկյունային բնակարաններում, հնարավորինս ապահովվելու է բնական օդափոխություն, ինչը մասամբ թույլ կտա կրճատել հովացման համար օգտագործված էլեկտրոէներգիան: Շենքի պատշգամբները, հատկապես հարավային ճակատներում մեծամասամբ ունեն ծածկեր, որոնք թույլ են տալիս պաշտպանվել արևի ուղիղ ճառագայթներից, և ըստ դրա չճանրաբեռնել բնակարանի հովացման համակարգը:

Շենքի բացվածքների ապակեպատման համար օգտագործվելու են եռաշերտ էներգոէֆֆեկտիվ ապակեփաթեթներ, բարձր պաշտպանիչ հատկություններով սերտիֆիկացված ապակիներով, որոնք հասցնելու են գրեթե 20%-ի արտաքին մթնոլորտի ջերմաստիճանի ազդեցությունը ներքին ջերմաստիճանի վրա:

Արտաքին երեսապատման համակարգը կատարվելու է մոդուլային օդափոխվող կախովի երեսապատման սիստեմով: Ջերմամեկուսիչ շերտի բավականաչափ կիրառումը և բաց օդափոխվող շերտը թույլ կտա ապահովվել շենքի առավելագույն ջերմամեկուսացում, որը կրերի էներգոէֆեկտիվության գործակցի կտրուկ աճի: Այս տեսակ մոդուլային տեխնոլոգիաները թույլ են տալիս մի քանի պատիկ կրճատել շինարարական աշխատանքների, կիրառվող ծանր տեխնիկայի և բեռնափոխադրումների ծավալը և օգտագործման ժամկետները մինչպես նաև լավագույն կատարման դեպքում հնարավորինս առավելագույնը նվազեցնում է ջերմային կորուստները երեսապատման համակարգից:

Կենտրոնացված ինժեներական համակարգերի կիրառելու շնորհիվ, հնարավորություն է տրվում ոչ միայն բարձրացնել շենքի էներգոէֆեկտիվությունը, այլ նաև տվիչների և ժամանակակից հաշվիչների միջոցով բացառել էներգոկորուստները, և էներգայի վատնումը այն

տարածքներում, որոնք կարիք չունեն ջեռուցվելու և հովացվելու: Շենքի ջեռուցման և հովացման համար ընտրված է VRF տեսակի ֆրիոնային հեղուկի հիմքով աշխատող համակարգը, որը ներկա պահին համարվում է լավագույն լուծումներից էներգիայի խնայման տեսանկյունից: Այստեղ, օրինակ՝ ամեն միավոր ակտիվացնելու համար կարիք չի լինում կիրառել մատկոցների ողջ ծավալը, որը թույլ է տալիս նկատելիորեն խնայել էներգիան այլ համակարգերի հետ համեմատելիս:

1.4.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Փաստաթղթերի մշակման նպատակով տեղամասում իրականացվել է ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ:

Փաստաթղթերի մշակման նպատակով ինժեներաերկրաբանական պայմանների վերաբերյալ եզրակացության կազմելու համար, իրականացվել է տարածքի տեղանքի տեղազննություն, տեղամասին հարակից շինությունների համար բացված շինարարական փոստրակի զննում, տեղանքում բնական երկրաբանական մերկացումների նկարագրություն, ինչպես նաև օգտվել ենք տեղանքին հարակից շինությունների համար փորված հորատանցքերի փաստագրական նյութերից:

Վերցված նմուշների համար որոշվել են գեոտեխնիկական հատկությունների ցուցանիշները:

Օգտագործվել են նաև Երևան քաղաքի տարածքի ինժեներաերկրաբանական ուսումնասիրության նյութերը:

Կատարված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակերը՝

Շերտ-1 Լիցքային գրունտ, շինարարական մնացորդներ, աղբ: Հորատված առավելագույն հզորությունը 3,0 մետր է: Շերտը համատարած չէ: Դրանք ժամանակակից տեխնածին առաջացումներ են:

Շերտ-2 Կավավազային գրունտ, սպիտակահողեր (белаземы), մարմնագույն, տեղ-տեղ դեղնավուն, շականակագույն երանգով, խճի և մանրախճի հետ, թերխիտ կազմվածքով, սակավ խոնավ: Այն գերնստող գրունտ է, ենթակա է հեռացման: Շերտն չունի համատարած տարածում, բացված հզորությունը մինչև 2,5-3,0 մետր է: Ժամանակակից դեյուվիալ պրոյուվիալ առաջացումներ են:

Շերտ-3 Բազալտներ՝ մոխրագույն, թույլ ծակոտկեն, տեղ-տեղ խոռոչավոր, բեկորային անջատումներով, կարծր Բազալտների մակերևույթը (հնետեվիեֆը) անհարթ է: Առկա է բազալտի շերտի հերթափոխություն տարբեր հզորության հրաբխային խարամի հետ: Բազալտի հերթափոխվող առանձին շերտերի հզորությունը տատանվում է 1,0-ից 7,0 մետր: Շերտը համատարած է: Չորրորդական ժամանակաշրջանի, հրաբխային առաջացումներ:

Շերտ -4 Հրաբխային խարամ, ավազային, ավազախճային կազմի, հանդիպում է նաև փոշային կազմով, շլակավորված բազալտի խճի և մանրախճի հետ: Առկա է

հրաբխային խարամի հերթափոխություն տարբեր հզորության բազալտի շերտի հետ: Հրաբխային խարամի հերթափոխվող առանձին շերտերի հզորությունը տատանվում է 1,2-ից 4,0 մետր: Շերտը համատարած է: Չորրորդական ժամանակաշրջանի, հրաբխային առաջացումներ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես հուսալի հիմնատակ առաջարկվում է բազալտների շերտը (շերտ-3): Գրունտների ֆիզիկամեխանիկական բնութագրերի հաշվարկային արժեքները բերվում են աղյուսակ 3-ում՝

Աղյուսակ-3

Ֆիզիկա-մեխանիկական բնութագրերը		Գրունտի շերտերը			
		1	2	3	4
1. Գրունտի խտությունը, տ / մ ³		1.70	1,65	2,55	1,64
2. Ծակոտկենության գործակիցը, e			0.837	0.082 4	0,767
3. Ներքին շփման անկյունը, աստիճան	φ		19	-	28
4. Տեսակարար շաղկապվածությունը, ՄՊա	C	-	0,03	-	0,001
5. Դեֆորմացիայի մոդուլը E, ՄՊա		-	7,5	5000	25
6. Ամրության սահմանն ըստ միառանցք սեղմման, R _s , ՄՊա		-	-	88,2	-
7. Պայմանական հաշվարկային ճնշումը, R, ՄՊա		-	0,18	-	0,30
8. Ներքնակի գործակիցը		-	1,0	50,0	3,0
9. Կարգն ըստ սեյսմիկ հատկությունների		III	III	I	II

1. Նախագծային նիշի սահմաններում, փաստացի անհամասեռ հիմնատակ ունենալու դեպքում՝ մի մասը ներկայացված բազալտներով, մյուս հատվածը բազալտների մեծաքարերով, խճով մանրախճով, հրաբխային խարամով, առաջարկվում է բազալտների մեծաքարերը, խիճ, մանրախիճը, հրաբխային խարամը հեռացնել, հասցնելով այն բազալտի շերտին: Այնուհետև նախագծային նիշին հասնելու համար առաջարկվում է կիրառել բուտաբետոն: Քանի որ առկա է էական տարբերություն բուտաբետոնի և բազալտների սեղմման դիմադրության , դեֆորմացիայի մոդուլի միջև առաջարկվում է կիրառել երկաթբետոնյա սալ:

3. Շինության ստորգետնյա մասերը հնարավոր մակերևութային ջրային հոսքից պաշտպանելու նպատակով նպատակահարմար է իրականացնել ստորգետնյա մասերի ջրամեկուսացում:

4. ՀՀՇՆ II-6.02-2006 համաձայն Երևան քաղաքի տարածքը գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում (a=0,4g), տեղամասի գրունտային պայմաններն ըստ սեյսմիկ հատկությունների գնահատվում են որպես 1-րդ կարգի, որին համապատասխանում է 0,36g (K₀=0,9) գրունտի հորիզոնական արագացման առավելագույն արժեքը:

$a_{max}=0.360g$

Ինժեներ-երկրաբան
երկր.գիտ.դոկտոր, պրոֆեսոր



Հայրոյան



Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց


Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 24,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից, մինչև 0.00 նիշ շինարարական աշխատանքների տեվողությունը 5 ամիս:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՆ ԵՎ ՄԻՋՈՒՄ ԵՎ ՇՐՋԱՊՈՒԳՅԱՆ ԴԱՄԱՐ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ																								
		ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ	ԱՄՍ
1.	ՇՈՒ ԴՐՈՒՄԿԱՆ ԿԱՏԱՎՈՐՈՒՄ	ԿԱՏԱՎՈՒՄ																								
2.	ՔԱՆՂԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ	ԿԱՏԱՎՈՒՄ																								
3.	ՅՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ	ԿԱՏԱՎՈՒՄ																								
4.	ԻՋԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՍՈՐԳԵՏՆԱԿ ԳՐԱԿԵՐԻ ԿԱՌՈՒԹՅՈՒՄ	ԿԱՏԱՎՈՒՄ																								
5.	ԱՍՈՐԳԵՏՆԱԿ ԳՐԱԿԵՐԻ ՏՐԱՅԵԿՈՒՄԱՑՈՒՄ	ԿԱՏԱՎՈՒՄ																								
6.	ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԴԵՏ ԼՈՏԻ ԵՎ ՏՈՓԱՆՈՒՄ	ԿԱՏԱՎՈՒՄ																								
7.	ՇԵՐԻ ԿԵՐԵՏՆԱԿ ԿՈՐԵՑՄԱՆ ԿՈՆՏՐՈՒԿՏԻՎԱՆԻ ԿԱՌՈՒԹՅՈՒՄ	ԱՍՏՆԱԿԻ ԿԱՏԱՎՈՒՄ																								
8.	ՏԱԼԻԻ ԱՆՈՐԱՑԻՉ ՇԵՐԵՐԻ ԴԱՏ.																									
9.	ԴԱՐՔԱԿՈՂ ԴԱՏԵՐԻ ԸՆԴՈՒՄ																									
10.	ՄԻՋՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																									
11.	ՇՈՒՈՑՅԱՆ ԱՐՔԱԻՆ ԳՐԱԿԱՐՈՒՄ																									
12.	ԱՐՔԱԻՆ ԻՆՏԵՆՏԻՎԱՆ ԳՇԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																									
13.	ՆԵՐՈՒՆ ԻՆՏԵՆՏԻՎԱՆ ԳՇԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																									
14.	ԱՌԻՍԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՈՆԵՐԻ ՏԵՂԱՌՈՒՄ																									
15.	ԿԵՐԵՏՆԱԿԻ ԵՎ ԱՌՇՈՒՄԱՑԻՎ																									
16.	ՆԵՐՈՒՆ ԳՐԱԿԱՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ																									
17.	ՑԱՐԱԾԻ ԱՍՏՐՈՒՄ / ԲԱՐԵՎՈՐՈՒՄ																									
18.	ԻՆՎ. ԳՇԵՐԻ ԵՎ ԱՌՇՈՒՄԱՑ, ՓՈՐՁԱՐՈՒՄ																									
	ՄԻՆՉԵՎ 0.00 ԵՎՎ ԿԱՌՈՒԹՅՈՒՄ																									
	ԿԵՐԵՏՆԱԿ ԴԱՏԱՎՈՐ ԿԱՌՈՒԹՅՈՒՄ																									
	ԱՎԱՐՔԱԿԱՆ ՓՈՎԱՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԾԵԿԱԿԵՐՈՒՄ																									

ՄԻՆՉԵՎ 0.00 ՆԻՇ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ – 5 ԱՄԻՍ

ԸՆՀԱՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ – 24 ԱՄԻՍ

			ԴԱՏԱԿԱՏՈՒՄԻ ԱՇԽԵՐԻ ԱՐՈՐՏԱՄԱՏԵՆ ՄՈՇ			
Գլխ. ճարտ.	Ա. Բարսեղյան	<i>[Signature]</i>	ՔԱՂԱՔՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՐ	Փուլ	Թերթ	Թերթեր
Նախագծեց	Ա. Բարսեղյան	<i>[Signature]</i>		ԱՆ	ԵԿ-1	1
			Դասը՝ Բաղադր.-Չկրուն վարչ. շրջ. Դ. Անխարք 14 / 12 և Դ. Անխարք 14 / 15	 ԿՐԱԿԱՏՆԱԿԱՆ ԴՐՈՑԱՆԱՍ ՄՈՐԻՏԻՎԱՆԻՍԻՆ ԻՐԱՎԱՅԱՑԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
			ՇՐՋԱՊՈՒՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎԱՅԱՑԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ			

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել 2.5 մ բարձրությամբ թիթեղով, մարդկանց անցման հատվածներում անվտանգության նկատառումներով պայմանավորված նախատեսել թիթեղյա ծածկոց:

Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի պահանջը ապահովելու նպատակով շինարարության ընթացքում շենքերի արտաքին մասը ծածկել անթափանց թաղանթով:

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ձևով են տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Նախատեսվող գործունեության տարածք շինհրապարակի կազմակերպման հատակագիծ



Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍԱՆՈՅՈՒԹՅ.
1	Կառուցվող շենքի ավտոկայանատեղին	
2	Պահակատուն	
3	Գրասենյակ	
4	Ճաշարան	
5	Լվացարան-ցնցուղարան	
6	Հանդերձարան	
7	Պատրաստի զուգարան-խցիկ	
8	Փակ պահեստ	
9	Քանդած հողի կուտակման տեղ էտլիցքի համար	
10	Հակահրդեհային վահանակ	
11	Չետադարձ ջրամատակարարումով պոմպ մեքենաների անիվները լվանալու համար	

ՎՊՏՄԱՆԻՆՏԵՑՎԱԾ Է ԵՐԿՐՈՒ ՅՈՂԱՎՈՐՈՒՄԱՐԱՆ ԵՆՆԱԿԱԳՈՒՄ ԵՎ ՎՊՐՉՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼԵՍՏԵԸ

ՆՇԱՆՆԵՐԸ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍԱՆՈՅՈՒԹՅ.
	1-ի փուլում քանդվող փոստրակի մակերեսի սեմանք, խորությունը մինչև 1204.50 նիշը	
	Ժամանակավոր էլեհադրոդայար և լուսարձակներ շինհրապարակի լուսավորության համար	
	Ժամանակավոր ջրի խողովակ ծորակով	
	Ժամանակավոր ցանկապատ մետաղաթիթեղով կամ պլաստառով 2.5 մ բարձրությամբ	
	Ժամանակավոր դարպաս 4.50մ լայնությամբ և դռնակ 1.0 մ լայնությամբ	
	Մեքենաների անիվները լվանալու բետոնե սալերով ժամանակավոր հարթակ	
	Թրթրափոր էքսկավատոր	
	Ինքնաթափ ավտոմեքենա	
	Գոյություն ունեցող հորեր	

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼԵՍՏԵԸ

ՎՊՏ	ԱԼՈՎԱՆՈՒՄՅԱՆ	ՊԱՎՈՐԱՏՈՒՄ	ԳԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՆԱԽԱԳԾԵՑ	Ժ. ՍԱՐԳՍՅԱՆ	<i>[Signature]</i>	Ք ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԻԹ ԱՆՁԱՆԹ 14/12 և 14/15 ՀԱՍՑԵՆՈՒՄ ԲԱՐՇՐԱՀԱՐԿ ԲԱԿԵԼԻ ՇԵՒԹ ՏԱԿ ԱՎՏՈՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒԹՅՈՒՄ	ԱՆ	ՇԿՆ-2	8
			ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ			
			1-ի փուլ - փոստրակի քանդման հատակագիծ մինչև 1204.50 նիշը Մ1:500	«ՎՊՐՉՈՒ ՆԱԽԱԳԾ» ՍԴԸ		

1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 100 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 8 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերաձրարձ կոունկ	Liebherr 125 ECB-B6	2
2	Էքսկավատոր կախովի սարքավորումներով	VOLVO-EC300DL	1
3	Շարժական կոմպրեսոր	ATLAS COPCO XAS66DD	1
4	Ավտոբետոնապոմպ	Liebherr 42 XXT	1
5	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	2
6	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	2
7	Փոխարկիչ թրթռիչների համար	ИВ-4	2
8	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	1
9	Էռակցման տրանսֆորմատոր	ТД-500	2
10	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		4
11	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	2
12	Ավտոինքնաթափ		Ըստ հաշվարկի
13	Ավտոբետոնախառնիչ	Mercedes-Benz ACTROSS 41444K	Ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է ամսեկան մեկ մարդու հաշվարկով 6 կգ 100x6x25/1000= 15 տ և շինարարական աղբն է մոտ 300 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

- a) **Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 8 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 92 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 570 օր (Շինարարության փուլ)

$$W_{\text{խ.տ.}} = (8 \times 0.016 + 92 \times 0.025) \times 570 = 1318 \text{ խմ/շին. ժամ.}:$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 քմ,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 570

$$U_1 = 1000 \times 0.0015 \times 570 = 855 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2173 խմ/շին. ժամ:

Բազմաբնակարան բնակելի շենքերի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը նախատեսվում է Ուլնեցի – Ռուբինյանց փողոցով անցնող D=220մմ ջրագծից, ջրահեռացումը նույն փողոցով անցնող D = 300մմ տրամագծի կոյուղատարից, հեղեղատարը Ուլնեցի – Ռուբինյանց փողոցով անցնող D=500մմ հեղեղատարին, հիդրանտ՝ Ուլնեցի – Ռուբինյանց փողոցով անցնող D=220մմ ջրագծից:

Ջրագիծը միանում է Դավիթ Անհաղթի փողոցով անցնող D=220մմ տրամագծի պոլիէթիլենե ջրագծից: Համաձայն տրված տեխնիկական պայմանի փողոցով անցնող ջրագծի վրա նախատեսվում է տեղադրել հակահրդեհային հիդրանտ, որը տեղադրվում է, D=1.0մ, H=1.5մ, Ե/Բ կլոր հավաքովի էլեմենտներով հորի մեջ: Ջրագծի կառուցումից հետո կատարվում է փորձարկում, որից հետո կատարվում է ետլիցք ավազով:

Կառուցել DN=200մմ կենցաղային կոյուղու կոլեկտոր, L=4մ երկարությամբ պոլիէթիլենե ակոսավոր խողովակներով: Նոր կառուցվող կոյուղու կոլեկտորը միանում է Դավիթ Անհաղթի փողոցով անցնող D=300մմ կոյուղու կոլեկտորի առկա դիտահորին: Նախատեսվում է կառուցել 1 հատ կոյուղու դիտահոր Ե/Բ հավաքովի կլոր էլեմենտներով՝ D=1.0մ, H=3.0մ: Կոյուղու կոլեկտորի կառուցումից հետո կատարվում է փորձարկում, որից հետո կատարվում է ետլիցք ավազով:

Կառուցել DN=200մմ հեղեղային կոյուղու կոլեկտոր, L=3մ երկարությամբ պոլիէթիլենե ակոսավոր խողովակներով: Նոր կառուցվող կոյուղու կոլեկտորը

միանում է Դավիթ Անհաղթի փողոցով անցնող $D=500$ մմ հեղեղային կոյուղու կոլեկտորի առկա դիտահորին: Նախատեսվում է կառուցել 1 հատ հեղեղային կոյուղու դիտահոր Ե/Բ հավաքովի կլոր էլեմենտներով՝ $D=1.0$ մ, $H=3.0$ մ: Հեղեղային կոյուղու կոլեկտորի կառուցումից հետո կատարվում է փորձարկում, որից հետո կատարվում է ետլիցք ավազով:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Երևան քաղաքի տեխնիկական ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, 30 կվտ ծախսով ՏԵ 306-ի 0,4 կ/վ ց/լ վահանից:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևան քաղաքի հյուսիսային մասում, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տարածքում, Կ.Ուլնեցի փողոց հ.56/14 հասցեում:

Նախկինում, N 01/18-07/1-9—5413-809 ճարտարապետա-հատակագծային առաջադրանքով կատարվել է նախագիծ որը անցել է համալիր փորձաքննություն և ստացվել շինարարության թույլտվություն 01/18-121569-193: Ներկայումս տարածքում ստացված քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա ընթանում են շինարարական աշխատանքներ: Տարածքում կազմակերպված է շինարարական հրապարակ:

Կից գտնվում են Ուլնեցի-Ռուբինյանց ավտոմայրուղին, բնակելի տներ, բազմաբնակարան բնակելի շենքեր, կից նախատեսվում է պատկից շենք՝ որի հետ առկա է համաձայնեցում:

Ժողովրդագրական կազմ ու բնակչություն

Երևան, քաղաք տեղակայված է Հրազդան գետի երկու ափերին: Հանդիսանում է պետության մայրաքաղաքն ու խոշորագույն բնակավայրը, վարչաքաղաքական, տնտեսական կենտրոնը: Համաձայն Հայաստանի պաշտոնական տեղեկատվության՝ 2014 թվականի հունվարի մեկի դրությամբ ունի 1.068.000 բնակիչ: Բնակչությունը աշխատում է արտադրական, էներգետիկ և այլ օբյեկտներում: Իրականացվում են մեծ ծավալի քաղաքաշինական ծրագրեր:

Գեոմորֆոլոգիական տեսակետից

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Քանաքեռ-Արաբկիրի լավային սարահարթի վրա:

Հիդրոերկրաբանական տեսակետից

Հիդրոերկրաբանական պայմանները Գրունտային ջրերը մինչև 30,0 մետր խորության վրա բացահայտված չեն: Գրունտային ջրերի մեծ խորությունների վրա

գտնվելու հանգամանքը պայմանավորված է բազալտների բարձր ճեղքավորվածությամբ և դրանով պայմանավորված բարձր ֆիլտրացիայի առկայությամբ: Շինարարական տեղամասի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարության համար:

Ֆիզիկաերկրաբանական Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր պրոցեսները և երևույթները որոնք կարող են ազդեցություն ունենալ նախագծվող կառույցի նորմալ գործնեության վրա վրա բացակայում են:

Մոտեցումներն ապահովված են Ուլնեցի-Ռուբինյանց ավտոմայրուղուց:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

2.2 ԿԼԻՄԱՆ

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+42^{\circ}\text{C}$: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	1113	-2.9	-0.8	5,1	11.8	16.3	20.8	24,5	24.2	19.9	13,1	6.4	0.1	11,5	-21	41

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
														հունվարին	օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների												Տարեկան	Ձնածածկույթ		
	Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Առավելագույն տասնօրյակա-յին բարձրությունը,սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի Առավելա-գույն քանակը,մմ
	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28				
Երևան	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47	50	53	152

Աղյուսակ 2.4 Քամի

Բնակավայր, օդերևույթաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնձում, (ն Պա)	Սախներ	Կրկնէլիությունը, % ըստ ուղությունների								Միջին արագություն, մ/վ	Միջին ամսական	Միջին տարեկան	Ուժեղ քամիներով	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			Հյուսիսայն (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրմ)	Հարավ (Ավ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	20	23	25
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9							
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1					
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5							
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4					
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6							
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8					
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0							


2.3 Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:


Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:


Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Գծապատկեր 1. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 2. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 3. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 4. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

2.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները 2014 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ₅-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.6 Հիմնային աշխատանքներ

Ստացված քաղաքաշինական թույլտվությունների հիման վրա ընթացքի մեջ են Ա մասնաշենքի կառուցապատման աշխատանքները և իրականացվել են Բ մասնաշենքի հողային աշխատանքները:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է: Համաձայն տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքի առաջին շերտը՝ Լիցքային գրունտ, շինարարական մնացորդներ, աղբ: Հորատված առավելագույն հզորությունը 3,0 մետր է: Շերտը համատարած չէ: Դրանք ժամանակակից տեխնածին առաջացումներ են:

2.7 Կենսաբազմազանություն

